

**Հայագիտության «ջահակիրը» Ռուսաստանում
(նյութեր Կ. Յուզբաշյանի գործունեության մասին)**

1.

**Գրախոսություն թե՛ գրախոսություն
կամ**

**պետերբուրգյան «փաստաբանը» պաշտպանում է ամերիկյան
«հայագետներին»¹**

Արմեն Այվազյան

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 1999 թ. հոկտեմբերի 16-ի համարը՝ «Գրախոսություն» խորագրի տակ լույս է ընծայել պետերբուրգցի պատմաբան Կարեն Յուզբաշյանի «Ամերիկյան հայագիտությունը Ա. Այվազյանի դատաստանի առջև» նյութը, որ նվիրված է մեր՝ «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսությանը» (Երևան, «Արտագերս», 1998, 259 էջ): Ուրախալի է, որ վերջապես՝ 10-ամսյա ետնաբեմային խուլ տրտունջներից հետո, ամերիկյան կնձ-հայագիտության կողմնակիցներից մեկը գրիչ է վերցրել և «հանդես եկել» իր անդրօվկիանոսյան գործընկերների պաշտպանությամբ: Մակայն, կարդալով Յուզբաշյանի հրապարակումը, ընթերցողը որևէ պատկերացում չի կազմում «գրախոսվող» աշխատության արժանիքների, թերությունների և նույնիսկ՝ բուն բովանդակության մասին: Ցավոք, Յուզբաշյանն ընտրել է «գրախոսության» հետ ընդհանուր եզրեր չունեցող՝ իրեն հայտնի բոլորովին այլ մի ժանր, որի բնույթն ու հատկանիշները կճշտենք ստորև:

Նախ՝ տեսնենք, թե ինչպե՞ս է Կ. Յուզբաշյանը «փրկում» ամերիկյան հայագիտությունը «դատաստանից», այլ կերպ ասած՝ քննենք նրա փաստարկները, արդյոք դրանք հերքում են մեր առաջադրած «մեղադրանքները»: Ամբողջությամբ մեջբերում ենք Յուզբաշյանի «պաշտպանական» ելույթը՝ Ռ. Սյունիին վերաբերող

¹ Մեր այս պատասխանը հանձնել էինք «Ազգ» թերթին դեռևս 1999 թ. հոկտեմբերին, սակայն բազմակի խոստումներից հետո, խմբագրությունն այն այդպես էլ չտպագրեց:

մասում (ուղղանկյունաձև փակագծերում կատարել ենք անհրաժեշտ սրբագրումներ և վերծանումներ).

Աշխատության գրեթե կեսը ուղղված է Ռուլանդ Գրիգոր Սյունու «Հայացք դեպի Արարատ. Հայաստանը նոր պատմության մեջ» (անգլերեն, 1998) գրքի դեմ [ոչ թե Ռուլանդ, այլ Ռոնալդ, և ոչ թե 1998, այլ 1993]: Ա. Այվազյանը աշխատում է հասկացնել ընթերցողին, որ դա [՞] ոչ միայն անօգուտ, այլ[և] նույնիսկ վտանգավոր գործ է: Կետ առ կետ նա շարադրում է այն դրույթները, որոնք իր կարծիքով անընդունելի են: Բայց ի՞նչ սկզբունքով է մոտեցել իր խնդրին [՞] ինքը՝ Ռ. Գ. Խյունին, ո՞րն է նրա ելակետը, մնում է անհայտ: Այս մանրամասների մեջ կորչում է հիմնականը՝ ո՞րն է վերջապես եղել այդ գրքի գիտական հիմնադրույթը:

Ընդամենն այսքանը. այս 5 նախադասությունն է դրված մեր ուսումնասիրության 19-114 էջերի դիմաց՝ որպես յուզբաշյանական նկատառում և քննադատություն: Հատկապես տպավորիչ է պետերբուրգյան «փաստաբանի» հաստատական հարցապնդումը՝ թե ո՞րն է, ի վերջո, Սյունիի գրքի «գիտական հիմնադրույթը»: Ընթերցողին տեղյակ պահենք, որ Սյունիի գրքում մեզ, ցավոք, չի հաջողվել հայտնաբերել որևէ լուրջ խնդրի գիտական քննություն, առավել ևս՝ այդպիսի «հիմնադրույթ»: Անհասկանալի է մնում, սակայն, գրախոս-«փաստաբանի» վարքագիծը. ինչու՞ ինքը, թեև պարտավոր է, չի բացահայտում Սյունիի գրքում առկա առեղծվածային այդ «գիտական հիմնադրույթը», ինչու՞ չի փորձում կետ առ կետ հերքել Սյունիի դեմ առաջ քաշված «մեղադրանքները», դրանցից որևէ մեկը չի արձարծում և, վերջին հաշվով, մենմենակ է թողնում իր «պաշտպանյալին»՝ Ա. Այվազյանի դատաստանի առջև:

Ինչևէ, համարելով, որ Սյունին փայլուն կերպով արդարացված է Յուզբաշյանն անմիջապես անցնում է Ռոբերտ Թոմսոնի «պաշտպանությանը»: Այս անգամ 47 էջանոց «մեղադրականին» (տե՛ս մեր 122-169 էջերը)՝ հակադրում է հետևյալ խառնիխուռն, հայերենին խորթ շարադրանքը (մեր նշումները դարձյալ ուղղանկյունաձև փակագծերում են).

Ռ. Թոմսոնի՝ Մովսես Խորենացու անգլերեն (այժմ լայն շրջանառության մեջ մտած) թարգմանությունը դիտվում է որպես ոչ ավել, ոչ պակաս «խայտառակ հրատարակություն» (էջ 109, ծան. 187): Գիտնականը ներկայացվում է իբրև «հայատյաց», ընդ որում այդ գործը պատվիրել են Ռոբերտ Թոմսոնին համապատասխան մարմիններ (էջ 181) [181 էջում

Թոմսոնն առհասարակ չի հիշված]: Քիչ հետո խոսք կլինի արդեն «թոմսոնների մասին»: Մնում է զարմանալ՝ ինչպե՞ս է միջազգային գիտական հանրությունը անտեսել այդ հանգամանքը [!] և կուրորեն դիտում է [!] Ռ. Թոմսոնին որպես հայ դասական մատենագիտության [°, հավանորեն՝ մատենագրության] լավագույն գիտականներից մեկին [!]:

Ինչ խոսք, փառահեղ պաշտպանություն է Յուզբաշյանն այս գործն էլ «շահեց»: Նույն ոճով և որակով գրված 10 նախադասություն ևս ու... «փաստաբանն պետերբուրգյան» «շահում» է նաև Ն. Գարսոյանի ու Լ. Ավդոյանի «գործերը» (այն է՝ մեր 111, 119-120, 185-205 էջերը): Այնուհետև ծայր են առնում փնջաձև պիտակավորումները. «Առանց չափազանցության, -- առաջ է անցնում Յուզբաշյանը, -- կարելի է ասել, որ գրքի բովանդակությունը կազմում է [են] ոչ թե բուն առարկան և նրա վերլուծությունը, այլ հեղինակի պարզ չարախոսությունը հայոց պատմության բազում մշակների դեմ... Միրողը անտեսում է մեր գիտելիքների հարաբերականությունը, իր տեսակետը դիտում է որպես եզակի և թշնամանքով լցվում այլախոհի նկատմամբ... Բայց դիլետանտիզմը չէ միայն, որ ծնունդ է տվել Ա. Այվազյանի գրքին» և այլն:

Իսկ այժմ՝ ավելի լուրջ խնդիրների մասին: Յուզբաշյանը «չի հասկացել», թե ինչու՞ է Թոմսոնը հայաստյաց հեղինակ: Համառոտ կրկնենք այն, ինչ գրքում մանրամասնորեն ապացուցված է: Թոմսոնը՝

1. միտումնավոր կեղծել է Մովսես Խորենացու բնագիրը.
2. իրենց ապրած ժամանակից՝ 5-րդ դարից, փորձել է տեղաշարժել Մովսես Խորենացուն դեպի 8-րդ դարի երկրորդ կես, իսկ Եղիշեին՝ դեպի 6-րդ դարի վերջերը.
3. ընդամին՝ փորձել է հոչակել հայ ոսկեդարի այդ երկու մեծերի աշխատությունները պատմական հավաստի նյութից զուրկ.
4. փորձել է վարկաբեկել ինչպես Մովսես Խորենացու և Եղիշեի անձերը, այնպես էլ միջնադարյան հայ պատմագրությունն ամբողջությամբ.
5. անդամատել է Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» վերնագիրը՝ անգլերեն թարգմանությունից ջնջել է «Հայոց» բառը.
6. միտումնավոր անտեսել է Հայաստանի պատմաբանների աշխատությունները.

7. միտումնավոր շրջանցել է սկզբնաղբյուրների այն հաղորդումները, որոնք հակասում են իր կանխադրույթներին.

8. Թոմսոնի ջանքերով՝ Արևմուտքում Մովսես Խորենացու և Եղիշեի երկերն այլևս չեն օգտագործվում որպես արժանահավատ սկզբնաղբյուր:

Ահավասիկ՝ մի նմուշ հայոց պատմության այդ «երախտավոր մշակի» արտադրանքից. «Փաստորեն, -- գրում է Թոմսոնը, -- Մովսեսը (Խորենացին) լկտի ու կեղծարար մի խաբեբա է», «առաջին կարգի աճպարար... Խիստ մեթոդաբանության մասին նրա հանդիսավոր հայտարարությունները նպատակ են ունեցել խաբել, շեղել քննադատական հայացքը և ապահովել իր սեփական տենդենցիոզ շարադրանքի ընդունելությունը» (գրքիս մեջ զետեղել ենք նաև այս և նման հայտարարությունների անգլերեն բնագրերը, տե՛ս էջ 129-131):

Սա՞ է միջազգային գիտական հանրության կողմից ճանաչված Ռ. Թոմսոնի՝ Կ. Յուզբաշյանի որակումով՝ «որպես հայ դասական մատենագիտության լավագույն գիտակներից ՄԵԿԻՆ-ի» հայագիտությունը: Արդյո՞ք այսքանը չի բնութագրում Թոմսոնին իբրև հայատյաց: Ու՞մ պարզ չէ, որ հայերի Պատմահայր Խորենացուն անվանարկելով՝ անվանարկում են հայ ազգն ամբողջությամբ: Այս ճշմարտությունը կարող է չհասկանալ միայն ազգային արժանապատվությունը վաղուց կորցրած մարդը, մասնավորապես՝ Կարեն Յուզբաշյանը, որ ամենուր բարձրաձայն քարոզում է, թե Թոմսոնին պետք է ընտրել ՀՀ Ազգային ակադեմիայի իսկական անդամ:

Սակայն չգարմանանք. Կ. Յուզբաշյանը երբեք էլ չի թաքցրել հայրենի հայագիտության վերաբերյալ իր դիրքորոշումը՝ դեռևս 21 տարի առաջ տված մի հարցազրույցում հստակ արտահայտելով հետևյալ միտքը. «...միայն հայերը և հայաստանցիները չեն, որ պետք է զբաղվեն հայագիտությամբ: Ճիշտ է, հայերը (մանավանդ Հայաստանում ապրողները) այս հարցում ունեն բնական մի առավելություն՝ զգացմունքային, հուզական լիցքը, արյան կանչը: Բայց ահա ուրիշներն էլ իրենց առավելությունն ունեն՝ անկանխակալ, նախապաշարումներից զերծ, սառնարյուն, ավանդույթներով չկաշկանդված, թարմ ու նորովի հայացքով երևույթներին նայելու հնարավորությունը» (տե՛ս «Հայրենիքի ձայն», 15 նոյեմբերի 1978 թ., № 46):

Դժվար չէ նկատել, որ արտասահմանյան հայագիտությանն առաջնություն տալու՝ իր խորապես հակագիտական տեսակետով Կ. Յուզբաշյանը փորձում է հայկական ու, հատկապես, հայաստանյան հայագիտությունը ներկայացնել որպես կանխակալ, նախապաշարումներով լի, տաքարյուն, ավանդույթներով կաշկանդված, երևույթներին թարմ ու նորովի նայելու անընդունակ, կարճ ասած՝ սուտ գիտություն: Ճիշտ ու ճիշտ՝ ինչպես Թոմսոնն ու նրա թիմակիցները:

Նույն հարցազրույցում Յուզբաշյանը խոստովանում է, թե՛ Լենինգրադում «...մենք աշխատում ենք ոչ թե Հայաստանից հրավիրել, այլ տեղում պատրաստել հայագետներ»: Եւ իսկապես՝ Յուզբաշյանը պատրաստեց «նախապաշարումներից զերծ» հայագետներ, այդ թվում՝ մոլի բունիաթովական, Արցախը Ադվանք-«Ադրբեջանի» անբաժան մաս հռչակած Ֆարիդա Մամեդովային, որի թեկնածուական դիսերտացիան ինքն էլ «հաջողությամբ» ղեկավարեց: Պատահական չէ, որ՝ «Հայոց պատմությունը Հայաստանի ռազմավարական անձեռնմխելի պաշարն է» մեր առաջադրած բանաձեւը Յուզբաշյանին կասպիական դողերոցքի մեջ է գցել: Չէ՞ որ՝ որոշ «հայագետների» համար հայոց պատմությունը եղել և մնում է սոսկ առուծախի առարկա:

Սակայն արդյոք Հայաստանի գիտական հանրությունը երբևէ միահամուռ արժանի գնահատական տվե՞լ է Ռ. Թոմսոնին կամ Կ. Յուզբաշյանին: Ո՛չ, տակավին չի տվել: Սա՛ է հիմնական ցավն ու խնդիրը:

Հավատարիմ մնալով Հայաստանի գիտական միտքը քամահրելու իր հիվանդագին դիրքորոշմանը՝ Յուզբաշյանը մեզ ևս համարում է տեղացի, հետևապես՝ դիլետանտ, սիրող, գիտությունն անտեղի քաղաքականացնող, ամենուր թշնամիներ տեսնող, իր պարտքն ու կոչումը մոռացած մտավորական, որի «գիրքը իր ոճով այնքան հեռու է այդ [հայագիտության] նորմերից, որ... լուրջ ընթերցողը ակամայից մերժում է նրա դրույթները»: Եւ սա ասվում է այն դեպքում, երբ գիրքը քննարկել և տպագրության է երաշխավորել Երևանի Պետհամալսարանի Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդը, լույս ընծայումից հետո էլ դրական են գրախոսել մի շարք այլ գիտնականներ (տե՛ս նույն «Հայաստանի հանրապետությունը», 12 փետրվար 1999. «Հայ զինվոր», 20-27 փետրվար 1999. «Հայաստան», 9 մարտի 1999. «Առավոտ», 18 փետրվար 1999): Իսկ ակադեմիկոս Մանվել Զուլալյանը, գրախոսելով մեր աշխատությունը հայագիտական

ամենահեղինակավոր պարբերականում՝ «Պատմա-բանասիրական հանդեսում» (1999, № 1), մասնավորաբար, գրել է. «Հիրավի, կատարված է պատմական և բանասիրական մեծ քրտնաջան աշխատանք և, հիմնականում, արդարացի գիտական քննադատության են ենթարկված Ռ. Թոմսոնի և այլոց “հայագիտական” մարզանքները»:

Ավարտենք: Քննադատական բնույթի գրախոսության մեջ ընդունված է կիրառել փաստարկը հակափաստարկով հաղթահարելու և հերքելու միակ հնարավոր՝ Կ. Յուզբաշյանին անձանոթ մնացած եղանակը: Յուզբաշյանի այսպես կոչված «գրախոսությունն» էլ այլ բան չէ, քան հասարակ զագրա-գրախոսություն:



8 декабря 2001 г.

ИСТОРИЯ АРМЕНИИ БЪЕТ В НАБАТ

Потрескается вера, а невежество утвердит лжеучение?

Бессмертное творение Мовсеса Хоренаци "История Армении" имеет своим резюме "Плач" великого старца, приобретший в наши дни совершенно новое звучание и особую символику. Вызов, брошенный отечественной истории известными своей предвзятостью представителями американской школы арменистики (К. Туманов, Р. Сюни, Р. Томсон, Н. Гарсоян, Дж. Рассел, Л. Авдоян, Р. Бедросян и пр.), как нельзя более созвучен содержанию "Плача", пролившегося на пергамент XVI столетий назад: "Учители глупые, самодовольные, сами себе присвоившие честь, а не призванные Богом, избранные серебром, а не святым духом, сребролюбивые, завистливые, забывшие кротость, в которой обитает Бог, и ставшие волками, терзающими свое стадо.

Епископы гордые, скорые на осуждение других, суесловные, ленивые, презирующие науку и пастырское наставление, любящие торжища и скоморошества".

Фальсификация истории армянского народа и армянской государственности как вполне самоопределившаяся "научная дисциплина" - явление отнюдь не новое. С середины 50-х годов прошлого столетия, нападки турецких и американских "арменоведов" на отечественную историю приняли более ожесточенный и бесцеремонный характер с явной ориентацией на полное или частичное вытеснение из сознания народа собственной национальной идентичности.

Вместе с тем следует отметить, что 10-летний отрезок независимого развития РА сумел преподнести на суд читателя несколько серьезных статей по данной проблематике и одну-единственную книгу - "Освещение истории Армении в американской историографии. Критический обзор" (А. Айвазян, Ереван, 1998г.). С учетом небывалых доселе по масштабам нападков на все без исключения этапы отечественной истории, в контексте явно предвзятых и более чем циничных толкований армянских первоисточников, на фоне оголтелой клеветы властей соседних государств на прошлое армянского народа и, наконец, с точки зрения мнимого (к сожалению) армянского национализма, это очевидный нонсенс.

Тем не менее сегодня есть основание предполагать, что география фальсификаций армянской истории в самое ближайшее время может заметно расширить свои границы, открыв представительство уже и в России. Во всяком случае такого мнения придерживаются некоторые армянские историки и арменоведы. Согласимся, что одно только название готовящегося к изданию труда - фактор вполне самодостаточный, чтобы представить основной ориентир книги - "Арцах-Карабах как отдельное историко-культурное явление". Отдельное, разумеется, от Армении.

Обращает на себя внимание и фигура редактора данного исследования, выступающего ныне в качестве проводника и гаранта успешного осуществления столь опасной для нас операции, - Карен Юзбашян. Вот уже 20 лет, как он является представителем "новой волны" арменоведов, характерной особенностью коих считается подчеркнутая непримиримость по отношению к специалистам "старого" (традиционного) мышления. В частности, еще в 1978 году он позволил себе заявить об этом, косвенным образом подвергнув критике разворачивающих свою деятельность в Армении ученых: "В конце концов есть еще одно обстоятельство, предопределяющее необходимость работы арменоведов в Ленинграде, да и в других научных центрах. Дело в том, что не только армяне и жители Армении должны заниматься вопросами арменистики. Конечно, армяне (и в первую очередь проживающие в Армении специалисты) имеют одно-естественное преимущество - эмоциональный заряд, чувственность, зов крови. Однако вместе с тем и другие в свою очередь имеют преимущества - непредвзятость (косвенное обвинение армянских ученых в предвзятости. - А. К.), непредубежденность (обвинение в изначальной предубежденности. - А. К.), хладнокровие, нескованность в смысле восприятий легенд и сказаний, возможность смотреть на явления по-новому, свежим взглядом (обвинение в излишней скованности и в архаичных подходах. - А. К.)". ("Айреники дзайн", 15 ноября, 1978).

Книга "Арцах-Карабах как отдельное историко-культурное явление" предусматривает в своем конечном проекте двадцать глав. Автором предисловия и ее главным редактором выступает, разумеется, Карен Юзбашян - в свое время научный руководитель Левона Тер-Петросяна².

В одном из своих последних исследований питерский византист, вторя догматическим домыслам представителей американской школы арменистики, пишет: "Многие исследователи пришли к выводу, что Мовсес Хоренаци жил не в V веке, а много позже, доводя датировку до IX века. Получалось, что, представляя себя учеником Месропа Маштоца и католикоса Саака, их младшим современником, автор прибегал к подлогу. К сожалению, к критике литературного и очень сложного памятника подключились и обывательские голоса, которые порой с угрозами по адресу противников настаивали на традиционной точке зрения, придав полемике вокруг чисто академической проблемы крайне нездоровый характер". (К. Юзбашян, "Армянская эпопея V века. От Аварайрской битвы до Нуарсаке". Москва, 2001).

Следует отметить, что к числу "обывательских голосов" Карен Юзбашян относит и голос одного из лучших историков молодого поколения Армена Айвазяна. В частности, он уже однажды позволил себе ("Айастани анрапетутюн", 16 октября,

² Арис Казинян здесь неправ. Научным руководителем Л. Тер-Петросяна был другой ученый.

1999) наброситься на последнего за проявленную им "неслыханную дерзость" в критике "светил арменистики" - представителей американской школы, с которыми Карен Юзбашян связан, видимо, узами не только профессиональными.

Во 2-м номере "Историко-филологического журнала" нынешнего года академик Рач Бартикян обращает внимание и на следующую деталь. На организованной Восточным факультетом Санкт-Петербургского университета международной научной конференции, посвященной 1700-летию официального признания христианства в Армении, Карен Юзбашян не упустил случая выступить: "Армянская церковь датирует это событие 301-м годом. Между тем известно, что с 299 года и до IV века в течение нескольких десятилетий Армения находилась под протекторатом Римской империи. Маловероятно, что как раз в то самое время, когда на рубежах Римской империи христианство подвергалось жесточайшим гонениям, Армения признала бы ее на официальном уровне. Что касается 314 года, то эта дата представляется достаточно обоснованной".

Весьма любопытное свидетельство о ходе подготовки новой книги мы находим у историка Геворга Язичяна, в статье "Арменистика в капкане геополитических игр" ("Айоц ашхар", 3 ноября, 2001г.). Оказывается, Карен Никитич совсем недавно побывал в Армении и встретился с очень известными специалистами. В личной же беседе с автором статьи господин Юзбашян отметил, что "город Шуши и прилегающие 5-6 селений в любом случае будут возвращены Азербайджану, ибо такова воля сильных мира сего". Он также дал понять, что очень спешит реализовать эту программу и побыстрее написать предисловие.

О "предисловиях" и о "редакционных работах", касающихся издаваемых за рубежом исследований по Армении, писалось неоднократно. В этой связи хотелось бы обратить внимание на наиболее свежий пример. В США появилась книга "Армянское народное искусство, культура и идентичность", изданная Индианским университетом в 2001 году. Редакторы - Левон Абрамян и Ненси Суизи. Книга отлично отпечатана в Гонконге тиражом в 5000 экземпляров.

Этнограф Левон Абрамян в этой связи сделал пояснения ("Священная гора", "Новое время" 7 ноября, 2001г.): "К сожалению, эта книга несколько отличается от той, которую предложил я. Издатели упростили ее, объясняя тем, что американский читатель мой вариант не понял бы. Я имею опыт преподавания в трех университетах США и убежден, что их научный и студенческий читатель все абсолютно понял бы. В конце концов, она ведь рассчитана не на широкую публику, а на профессионалов". Это - прецедент!

Необходимо акцентировать внимание на следующем: к работе над книгой "Арцах-Карабах как отдельное историко-культурное явление" фактически впервые предпринимается попытка подключить и специалистов из Армении. Согласимся, что в контексте вышецитированных обвинений в адрес последних данная инициатива по меньшей мере настораживает. Очевидно, что любая степень вовлеченности армянских ученых в процесс создания книги с таким названием и с таким редактором - есть косвенное свидетельство полного согласия историков из Армении с обоснованностью именно такой постановки вопроса.

Более того, при нынешней расстановке сил и возможностей даже серьезные разделы, написанные армянскими специалистами, как это ни парадоксально, но

пойдут во вред, ибо прибавят вес и предисловию Карена Юзбашяна, и проповедуемой идее в целом.

Не случайно, что отдельные главы предполагаемого издания уже нашли своих авторов в лице представителей "американской школы" арменистики. Проект "Карабах-Арцах как отдельное историко-культурное явление" - есть брошенный армянским ученым крайне дерзкий вызов и попытка кооптации всех сил арменистики с целью изоляции и отторжения самого понятия Карабах-Арцах из национального мышления армян.

Видимо, дело не в Карене Юзбашяне. Дело за армянскими историками. Вероятно, давно назрела необходимость организации крупного форума арменоведов с серьезнейшим рассмотрением всех накопившихся вопросов.

"Плач" Мовсеса Хоренаци, к сожалению, не устаревает, а посему - в назиданье:

"Оплакиваю тебя, Земля армянская, оплакиваю тебя, о благодатнейшая из всех северных стран: у тебя нет более ни царя, ни иерея, ни советника, ни учителя! Мир возмутился, укоренился беспорядок, потряслась вера, невежество утвердило лжеучение".

Арис КАЗИНЯН